ինչ վնաս կապալառուներին. 13) ինչի աղ գնելու եկածները գլխաւորապէս առնում են նրան մանաւոր պահեստներից, բայց ոչ թէ աղահանքից. 14) ինչ է պատճառը որ գոյութիւն ունեն Կուլպի մէջ աղի մանաւոր պահեստներ աղի միլիոնաւոր պուդերով, երբ որ տաս քայլ հեռաւորութեամբ գտնվում են արքունի պահեստներ. 15) ինչ նշանակութիւն ունի Ասար գիւղը (Կուլպից 5 վերստ հեռաւորութեամբ) որի ամբարների մէջ գտնվում են աղի ահագին պահեստներ և 16) չահաւէտ է արդեօք կապալառուին ծախել մանր աղը.

Այդ բոլոր հարցերին ես կաշխատեմ մի առ մի պատասխանել իմ հետեւեալ նամակներում.

***

ՆԱՄԱԿ ՋԻԲՐԱՑԵԼԻՑ

—

Մայիսի 30-ին

Այս տարի մեր կողմերը ձմեռը սաստիկ չէր. Գարունը անձրևներ չնորհեց մեզ. ուստի այս կողմերի հացարոյսերը անցեալ տարվանից առատ են. Մայիսի կարկտահարութիւնները ոչ սակաւ հարուածներ տուին լեռնաստորոտներում գտնված այգիներին.

Օրերումս ամպամած անձրեւախառն ցրտեր արեց 3–4 օր չարունակ. բարձր սարերի գագաթները ձիւնապատ հանդիսացան, դեռ ևս էլ երևում են. Անջուր, անկոխ, անմարդաբնակ դաշտերը, ուր գտնվեցան հացի թշնամի միջատները, ուր հազիւ հազ կը պատահեն անձրևներ և տարիներով կանանչ խոտաբոյսեր չեն երևած, ինչպէս անուանվում են,—Օլթանից բարձր Տաշբուռուն, Սոլթանբուդ, Հին-Շհար, Ավիր-գալայ, Միլին՝ հարթ հաւասար անվերջ անծայր դաշտերը. ե՞րբ կը լինի, որ այս անսպառ գանձերի դաշտերը կը մշակվեն և մարդկութեան արօրի գործիքի տակ կընկնեն,—երբ Պարսկաստանից աւազակների աւերիչ արշաւանքը կը պակասի այս տեղերից, երբ Արաքս գետի ափերում բնակվողները չեն գաղթի իրենց տեղերից, երբ բարձր կառավարութիւնը այդ ոսկի դաշտերը ջուր բերելու համար կարգադրութիւն կանէ և հողատնտեսականութիւնը կը մտնի այդ դաշտերը.

Բայց այս դաշտերում մորեխ կոտորողները պատմում են, թէ այս տարի անձրևի չնորհով այնքան առատ են թարմ և գեղեցիկ եօնջախառն խոտաբոյսերը, որ մանգալու հնար չը կայ, այնպէս որ, գերանդիով վեր են տուել, յետոյ սկսել միջատներին կոտորել. ժողովուրդը ցերեկով արեգակի տակ, իսկ գիշերները ոչ սակաւ դժուարին չարչարանքներ կրելով սարսափելի մոծակներից, աշխատել է մորեխ կոտորելու. Ասում են 100 վերստ հեռաւորութիւնից էլն հասցնում խմելու ջուրը. Հայերը կամաւորապէս պարտաւորութեամբ էին գնացել՝—ձիաներով, գինիով, արաղով և ջրի ամաններով, բայց թուրքերը ոչ այսպէս, այլ ակամայ և անպատրաստ, ուստի և ծարաւի զոհ են գնում թուրքերից երեք հոգի. Ասում են, որ եթէ հայերը չօգնէին, թուրքերից ծառաւի զոհ գնացող շատ կը լինէր.

Օրերումս տեղիս հաշտարար դատաւորի թարգմանչի 15 տարեկան ծառային, իրան սիրոջ ձիով Ջիբրայէլից Փիրահմատու գնալիս, Ցուլտուլ անուանեալ ապառաժոտ ձորակի ճանապարհի անցքում աւազակները ողորմելու գլուխը կըտրում են ձեռքիցը ձին յափշտակելով. Հետեւալ օրը ձին ճանաչվում է Պարսկաստանում. Երէկ գաւառապետը հեռագիր ստացաւ Նահանգապետից, Պարսկաստանում մորեխի լինելը ստոյգը իմանալու համար.

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Օդէսայի «Пчелка» լրագիրը լսել է, որ իր պատկիլներով յայտնի, «Берегъ» լրագրի նախկին խմբագիր Ցիտովիչ, մտաւ եգուիտների կարգը Գրէնօբլում, իսկ իր աղջկան Sacré coeur վանքը տուեց կրթութեան համար. «Берегъ» լրագրի հրատարակութեան համար ստացած փողից, պ. Ցիտովիչ պարտաւոր էր գանձարանին վերադարձնել 34,000 ռուբլ, բայց այդ գումարը մեծահոգութեամբ նրան ընծայեցին, և որպէս չնորհակալութիւն, նա եգուիտների միաբանութիւնը մտաւ, որ աքսորված է Ռուսաստանից. Այդպիսով, պետական փողերից մօտ 200,000 ռուբլ վատնելով, պ. Ցիտովիչ վերջը դարձեալ 34,000 ռուբլ պրէբէնդա ստացաւ.

—

Օրիորդ Աստղիկ տալու է երկուշաբթի օր, յունիսի 15-ին, տեղիս հայ սիրողների մասնակցութեամբ մի կոնցէրտ-ներկայացում Արծրունու թատրոնում.

—

«Русскій Курьеръ» լրագրի խմբագիրներից մին, Նէֆէդով, մայրաքաղաքի լրագիրներից մինի մէջ իր տպված նամակով բացատրում է որ երկու ամիս առաջ կալանաւորված է եղել Լորիս-Մէլիքով կոմսի հրամանով, մեղադրվելով ռուսաց յեղափոխական կուսակցութեանը պատկանելում. Նրա բնակարանն էլ պոլիցիայի խուզարկութեանը ենթարկվեցաւ. Այժմ նա կրկին ազատված է, որովհետև ոչինչ չը գտան նրա բնակարանում որ քիչ թէ շատ կասկածաւոր լինէր և նա անմեղ է յայտնված. Այժմ բանտից ազատվելով Նէֆէդով իմացաւ որ զոհ է եղել մատնութեան.

—

«Порядокъ» հաղորդում է որ հոկտեմբեր ամսից կը հրատարակվի Խարկովում մի ամսագիր «Міръ» անունով, պ. Շիմկովի խմբագրութեամբ.

—

Օմսկ քաղաքում, ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, հիմնվելու է մի տեխնիկական դպրոց.

—

«Новости» լրագիրը լսել է որ կառավարչական բարձր շրջաններում դիտաւորութիւն կայ վերցնել պոլիցմէյստրների պաշտօնը գաւառական քաղաքներում և յանձնել նրանց պաշտօնը ժանդարմների գլխաւորներին.

—

Օդէսայում հակահրէական անկարգութիւններից յետոյ կալանաւորվեցան 996 քրիստոնեայ և 164 հրէայ, իսկ գիշերային խուզարկութիւնների ժամանակ գտնվեալ 1,015 հոգի.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական համայնքների Ժողովի նիստի ժամանակ Ֆոուլեր յարձակվում էր արտօնութիւն ունեցող հողային սեփականութեան դէմ և պահանջում էր, որ ամենքը հաւասար իրաւունք ունենան հող գնելու և ծախելու համար. Գլադստոն պատասխանեց, որ ինքը իբրև մասնաւոր մարդ բաժանում է Ֆոուլերի կարծիքը, բայց իբրև մինիստր նա չէ կարող յայտնել իր կարծիքը այդ հարցի մասին, որ գործնականապէս բաւական մշակված և հասունացած չէ. Նրա կարծիքով, Ֆոուլերի առաջարկութիւնը միանգամայն չէ կալուածատէրերի համար, որովհետև հողերի վերաբերութեամբ կատարեալ ազատութիւնը նրանց համար շահաւէտ է. Կալուածական այժմեան օրէնքները չափազանց միանգամայն են և դրանց փոփոխելը կը բարձրացնի ժողովրդի և արիստոկրատիայի բարոյական եռանդը, բայց այնու ամենայնիւ Գլադստոն խորհուրդ տուեց Ֆոուլերին յետառնել իր առաջարկութիւնը. Համայնքների ժողովի անդամների մեծամասնութեան բացակայութեան պատճառով այդ հարցը չը վճռվեցաւ և նիստը փակվեցաւ.

Իրլանդական անկարգութիւնները շարունակվում են. Անդադար ժողովներ են կազմվում, որոնց ժամանակ արտասանած ճառերը չափազանց միանման և միակողմանի են. Հետաքրքիր է Նեշտի եպիսկոպոսի ճառը, որին մի ադրէս ներկայացրին իրլանդական միութեան բաժիններից մէկի ներկայացուցիչները. Ադրէս ներկայացնողները մեղադրում են մինիստրութեանը, որ նա կամենում է արտաքսել իրլանդացիներին իրանց հայրենիքից. Եպիսկոպոսը պատասխանեց մի ընդարձակ ճառով, որով գովում էր Գլադստոնի կալուածական օրինագիծը և պախարակում էր ֆերմերներին արտաքսելու գործը. Նա խորհուրդ տուեց առաջարկել կառավարութեանը դադարեցնել ֆերմերներին արտաքսելը, մինչև հաստատվի կալուածական օրինագիծը. Կառավարութեան մի քանի անդամներ կամեցել են փակել կալուածական միութիւնը, բայց այդ անկարելի է. Ճառախօսը Ամերիկայից մի նամակ է ստացել, որով նրան յայտնում են, թէ այնտեղ կալուածական միութիւնը 5 միլիոն կուսակցներ ունի. „Բաւական է, որ

պած էր, և ոչ թէ դերը յետ եմ ուղարկել. Եթէ այդպէս լինէր, պէտք է որ ինձ տուգանք նշանակէին.

Մէկ բանում միայն «Մեղուի» 95 համարում յօդուածը ճշմարիտ է խօսում. այդ այն է, որ ես 17 ամսվայ ռօճիկ եմ ստացել. Արդարև 1879 թ. օգոստոսի մէկից մինչև 1880 թ. մայիսի վերջը 10 ամիս. 1880 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1881 թ. ապրիլի վերջը չը հաշված մարտ ամիսը կանէ 7 ամիս. միասին—17-ը ամիս. Խնդրեմ ասացէք, ուր մնաց մայիս ամսվայ ռօճիկը, որ այդպէս անօրինաբար ինձ վրա են բարձում. Մինչև հիմայ գրածներիս, բերած փաստերիս և բացատրած հաշիւներիս վրա հասարակութեան ուշադրութիւնը խնդրելով, մնում է ինձ պարտք դեռ երկու և աւելի նշանաւոր զրպարտութեանց վրա խօսել, որ եթէ ճշմարիտ լինէին, ոչ թէ իմ վարմունքս «պախարակելի» կը լինէր, ինչպէս ասում է «Մեղուն», այլ և ցածութիւն է. Իսկ եթէ այդ ամենը զրպարտութիւն լինի, իսկ եթէ պարզվի, որ ես եմ զրկված և վիրաւորված, և թէ մանաժողովը իր բոլոր ընթացքովը ինձ դէմ, աշխատում է եղել, որ ես բեմի վրա անյայտ մնամ, և թէ մանաժողովը ուրախ է որ հեռացել եմ, միայն ձևացնում է որ վիրաւորված է— այն ժամանակ մամուլի պարտքն է, արդար քննել գործը և այնպէս դատել, եթէ այդ կարող չէ անել, չը պէտք է ուժեղի օգտին, անզօրի վրա յարձակվի. Այդ զրպարտութիւններն են 1) որ ես մանաժողովի 150 ր. առել և բեմից հեռացել եմ, այսինքն պարզ խօսենք, մանաժողովի 150 ռուբլին յափշտակել եմ. այդ սուտ է և զրպարտութիւն է. 2) որ ես իբրև թէ օգուտ եմ քաղել Տ. Ս.—Զ.—ի, Տ. Ա—ի, և օր. Վ.—ի տկարութիւնից, որ օր. Վ.-ի ներկայացումը խանգարեմ, բայց օր. Սիրանոյշը իբր թէ կարճ միջոցում պատրաստել է այդ դերը. Այդ էլ զրպարտութիւն է. Ապրիլի 30-ին խաղացինք «Կովերլէյի սպանումը». Մայիսի 1-ին, ինչպէս սովորութիւն է, մենք ամենքս պէտք է հաւաքվէինք և մեզ ամենիս (գոնեա ինձ) անծանօթ «Ընտանեկան միութարութիւն» պիէսան կարդալու, և այդ օրը պէտք է առաջին կրկնութիւնը սկսվէր, հէնց այդ առաւօտն էր որ ես գրեցի մի նամակ Իշխան Ամատունուն, որի մէջ մայիս ամսվայ համար ապահովութիւն էի պահանջում, ուրեմն ես չէի մտածում ներկայացման խանգարման վրա. օր. Սիրանոյշն էլ այդպիսի մի չնչին դեր հարկաւորութիւն չունէր կարճ միջոցում պատրաստել, քանի որ ամենքս էլ հէնց մայիսի 1-ից պէտք է դերերի հետ ծանօթանայինք. Ամենքիս համար էլ չորս օր ժամանակ կար. Ով որ ներկայացումը խանգարել է կամենում, կրկնութիւններին գնում է, և վերջի օրում թողնում է բեմը յանկարծ—իսկ ես այդպիսի բան չեմ արել. Բայց ինչ է նշանակում «մայիսի ռօճիկը ստացայ» ստորագրութիւնս, և թէ ինչու ես օր. Վիրգինէի խաղին չը մասնակցեցի, ահա սրանց մասին ես պիտի խօսիմ և այդ պատճառով պէտք է սկզբից սկսեմ, և կարճ անելու համար չը պէտք է մտնեմ մանրամասնութիւնների մէջ. 1880 թ. մայիսին գալիս է ինձ մօտ պ. Ս. և յայտնում է մեզ (ինձ և քրոջս), որ մանաժողովը մտադիր է ներկայացումները դադարեցնել մինչև սեպտեմբեր ամիսը, որ վերջը աւելի լաւ միջոցներով սկսէ ներկայացումները, դրա համար հարկաւոր է գտնում պարոնը, որ մենք հրաժարվենք մեր պայմանագրից, մեր ռօճիկներից. Պ. Ս. աւելացրեց, որ եթէ մենք չանենք այդ, մանաժողովը ստիպված կը լինի շարունակելու ներկայացումները և միւս դերասաններին վճարելու ռօճիկը. Պ. Ա. Մանդինեանցը եկաւ մեզ մօտ նոյնպէս և յայտնեց, որ այդ բանը աշխատում է գլուխ բերելու պ. Ս., բայց եթէ մենք չը հրաժարվենք մեր ռօճիկից, միւս բոլոր դերասանների տուած ստորագրութիւնները նշանակութիւն չը պիտի ունենան. նրանք կը ստանան ռօճիկը. Անտարակոյս դժուար էր մեզ օտար երկրում պայմանագրից կամաւոր հրաժարվելը, որով զրկվում էինք երկու ամիս ու կէս ռօճիկից, բայց պ. Ս. համոզեց մեզ, որ այդ զոհաբերութիւնը անենք ազգային թատրոնի օգտին—և ես ստորագրեցի նրա բերած թղթին. (Արդեօք այս զոհաբերութիւն չէ). Յունիս ամսին պ. Ս. գալիս է մեզ մօտ մանաժողովի կողմից և առաջարկում է պայմանագիր կապել թատրոնական նոր սեզոնի համար.

Ես արդէն Կ. Պոլսից նամակներ էի ստացել և տեղեկացել էի, որ այնտեղ է հասել պ. Ա. Ց. և դերասաններ, դերասանուհիներ է հրաւիրում Թիֆլիսի բեմի համար, նոյնպէս իմացել էի նրանց ստանալու ռօճիկների քանակութիւնը. Ուրիշ շատ հանգամանքներ նոյնպէս հաշվի առնելով ամենևին չէի կամենում ես անցեալ տարի մնալ Թիֆլիսի բեմի վրա. Բայց պ. Ս. ինձ համոզեց, որ մնամ. Պայմանագրի վրա խօսելով Պ. Ս. թէ իր և թէ Իշխան Ամատունու կողմից հաւատացրեց, որ Կ. Պոլսեցի դերասանների և դերասանուհիների պայմանները բոլորովին մի և նոյնն են, և թէ պ. Ա. Ց. իրաւունք չունի 150 ռուբլուց աւելի բարձր ռօճիկի իր ստորագրութիւնը տայ, և եթէ վերջը հաստատվի որ նոր հրաւիրված դերասանուհիները աւելի լինեն ստանում, Իշխան Ամատունին խօսք է տալիս մեզ մեր ռօճիկներն էլ աւելացնելու. Պ. Ս. ասում էր, որ Իշխան Ամատունին մի օրինակ պայմանագիր ունի ամենի համար, որին արդէն պ. Ադամանը ստորագրել է— և թէ յօգուտ հայոց թատրոնի և կարգը պահելու համար մենք էլ ստորագրենք այդ պայմանագրին և վստահանանք բոլորովին Իշխան Ամատունուն թէ ռօճիկի և թէ դերերի վերաբերմամբ, որովհետև, ասում էր պ. Ս. Իշխան Ամատունին անտրպէտնեօր չէ, թատրոնից նիւթական շահ չունի, այդ ազգային նոր հիմնարկութիւն է և ձեր մէջ կապը պէտք է աւելի բարոյական լինի. անտարակոյս Իշխանը ձեզ երկրորդ տարին է, որ ճանաչում է և դուք ձեր ռօճիկները զոհեցիք, նա չէ կարող ձեզ զրկել և նորերին աւելի ռօճիկ տալ, և ուրիշ շատ սիրուն խօսքերով աշխատում էր մեզ համոզել. Իշխան Ամատունու մօտ գնացինք, մի և նոյնը կրկնեց նա. Միմիայն բենեֆիսների վրա էր մնում խօսքը. Իշխանը ասում էր, որ մինչև մեծ պասը ամենի բենեֆիսի եկամուտը կը լինի յօգուտ մանաժողովի, ուրեմն բենեֆիսի եկամուտը մեզ չէ կարող տալ, դրա փոխարէն նշանակում է մեզ երեք հարիւր ռուբլի, եթէ մեծ պասից առաջ բենեֆիս կամենանք, իսկ եթէ մենք մեծ պասին բենեֆիս տանք, եկամուտը կարող ենք առնել, եթէ երեք հարիւր ռուբլին չենք կամենայ. Ես տուն յետ դառնալով այնու ամենայնիւ մտածմունքի մէջ էի և չէի վճռում ասած պայմաններին ստորագրելու. Պ. Ս. եկաւ և այնպէս համոզեց մեզ իր խօսքերովը, որ ես և քոյրս գնացինք ստորագրեցինք Իշխան Ամատունու մեր առաջ դրած պայմանագիրը. Այդ պայմանագիրը թէ իմ և թէ իմ քրոջս համար մի և նոյն էր. ես նրա օրինակը չը ստացայ, և թատրոնական սեզոնի մինչև վերջը իմ ձեռքումս ոչ պայմանագիր կար և ոչ էլ մինչև օրս Իշխան Ամատունու ստորագրութիւնը, ես հաւատացել էի լոկ նրա ազնիւ խօսքին, և պ. Ս.-ի խոստումներին. 1880 թ. սեպտեմբերի 4-ին առաջին ներկայացումն էր. Առաջին ներկայացման յաջողութիւնը յայտնի է հասարակութեան. Ես իմացայ մի և նոյն ժամանակ որ օր. օր. Ն. և Վ. Գարաքաշները ստանում են մօտ երկու հարիւր ռուբլ ամսական ամեն մէկը. Ես լսեցի և ռօճիկի համար խօսելը աւելորդ համարեցի. Ինչ որ ամբողջ սեզոնի ընթացքում եղել է, ես էլ չեմ գրում, բաւական է, որ ասեմ, թէ բացի անցեալ սեզոնից կրկնած «Լիսի Դիդիէից» և մէկ էլ Տրուվիատան, որ Աստուած գիտէ ինչպէս բեմի վրա տրուեցաւ, ինձ ոչ մի առաջնակարգ, օրիորդ Աստղիկ